ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ

ՇԱԽՄԱՏԻ 19-ՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

Հայաստանի շախմատի ակադեմիան ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համատեղ անցկացնում է ՀՀ դպրոցականների շախմատի օլիմպիադայի եզրափակիչ փուլը:
Շախմատի օլիմպիադայի հովանավորն է Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ):
Շախմատի օլիմպիադայի անցկացման կանոնները.
ՀՀ դպրոցականների օլիմպիադայի եզրափակիչ փուլ՝
Օլիմպիադան անցկացվում է թիմային հաշվարկով:
Մասնակցում են նախորդ փուլում իրավունք ստացած ք. Երևանը և ՀՀ բոլոր մարզերը ներկայացնող 14 դպրոցների ուժեղագույն թիմերը: Յուրաքանչյուր թիմում հանդես են գալիս 3 տղա և 1 աղջիկ: Մրցաշարը կանցկացվի շրջանային մրցակարգով:
Օրակարգ՝

Ամսաթիվ	Օրակարգ	Մեկնարկ
10 հոկտեմբերի	Բացման արարողություն	**16:30**
10 հոկտեմբերի	I-IV տուր	**17:00**
11 հոկտեմբերի	V-X տուր	**10:30**
12 հոկտեմբերի	XI-XIII տուր	**10:00**
12 հոկտեմբերի	Փակման արարողություն	**12:30**

Ժամակարգը՝

Մրցաշարի եզրափակիչ փուլն անցկացվում են ՖԻԴԵ-ի արագ շախմատի կանոններով: Խաղացողին տրվում է 10 րոպե մինչև խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 5 վայրկյան հավելումով:
Հաղթանակը գնահատվում է 2, ոչ ոքին՝ 1, իսկ պարտությունը՝ 0 միավորով:
Հաղթող թիմերը կորոշվեն ըստ.
ա) թիմի անդամների անհատական արդյունքների հանրագումարի.
բ) թիմային միավորների հանրագումարի (հաղթանակը գնահատվում է՝ 2 միավոր, ոչ-ոքին՝ 1 միավոր, պարտությունը՝ 0 միավոր).
գ) թիմերի անհատական հանդիպման արդյունքի
դ) եթե այդ ցուցանիշն էլ է հավասար, ապա անցկացվում է լրացուցիչ մրցախաղ (մրցաշար-մրցախաղ՝ կայծակնային խաղի կանոններով յուրաքանչյուր, խաղացողին տրվում է 5-ական րոպե)
Ժամկետը՝ 2025թ., հոկտեմբերի 10-ից 12-ը
Վայրը՝ ՀՀ, ք. Դիլիջան, Գետափնյա 7, «ՅՈՒ ԴԱԲԼՅՈՒ ՍԻ (UWC)» ԴԻԼԻՋԱՆԻ ԴՊՐՈՑ